ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

7 հոկտեմբերի 2025թ. թիվ 583-Ա

«ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԳԵՂԱՍԱՐԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ»
ՊՈԱԿ-Ի ՏՆՕՐԵՆԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
ԿԱՏԱՐՈՂ ՆՇԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի փետրվարի 9-ի «Պետական հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի պաշտոնի թափուր տեղի մրցույթի հայտարարման, անցկացման, մասնագիտական հանձնաժողովի ձևավորման, գործունեության և տնօրենի նշանակման կարգը հաստատելու մասին» N 181-Ն որոշման հավելվածի 6-րդ կետով, հիմք ընդունելով ՀՀ Լոռու մարզպետի 2025 թվականի հոկտեմբերի 1-ի թիվ 571-Ա որոշումը և հաշվի առնելով Լ.Թադևոսյանի համաձայնությունը՝

Ո ր ո շ ո ւ մ եմ.

1. Մինչև սահմանված կարգով տնօրենի թափուր տեղի համար հայտարարված մրցույթի արդյունքում տնօրենի նշանակումը «ՀՀ Լոռու մարզի Գեղասարի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրենի պարտականությունները կատարող նշանակել «ՀՀ Լոռու մարզի Գեղասարի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի ուսուցչուհի Լեյլի Լենդրուշի Թադևոսյանին:

2. «ՀՀ Լոռու մարզի Գեղասարի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի հաշվապահին՝ «ՀՀ Լոռու մարզի Գեղասարի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի կանոնադրությամբ սահմանված տնօրենի լիազորությունների իրականացման համար Լ.Թադևոսյանին տալ լրավճար «ՀՀ Լոռու մարզի Գեղասարի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրենի տարիֆիկացիոն ցուցակով հաստատված աշխատավարձի 30%-ի չափով:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2025 թվականի հոկտեմբերի 7-ից:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ Ա.ՄԿՐՏՉՅԱՆ

2025թ. հոկտեմբերի 7
ք.Վանաձոր